

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԻՄՍԱԿԱՆ ՊԱՏՄԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՄԱՐԶԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ (XIX-XX դդ.)

ԴԵՐԵՆ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

Ա. Պատմական Հայաստան

Հայկական բարձրավանդակը հայ ժողովրդի բնօրբանն է, ուր ընթացել է նրա պատմական կյանքը, ստեղծվել բազմադարյան մշակույթը։ Տակալին վաղնջագույն անցյալում (մ.թ.ա. առաջին հաղարամյակի առաջին կեսերին), հայ ժողովրդի կազմավորման ընթացքում, ձևավորվել են մի շարք պատմագրագրական մարզեր (ՊԱՄ)՝ տնտեսամշակույթային յուրօրինակ առանձնահատկություններով, որոնք, չնայած սլատմաքաղաքական սլարբերական վայրիվերումներին, հիմնական գծերով սլահաղանվել էին մինչև XX դ. սկզբները։

IX դ. հարուստ ազգագրական նյութերի, բանահյուսական, բարբառագիտական տվյալների, ինչպես նաև գրավոր աղբյուրների տեղեկությունների համագրմամբ հնարավոր է գառնում ուրվագծել Հայաստանի հետեւյալ հիմնական ՊԱՄ-երը՝ հիմք ընդունելով «Աշխարհացույց»-ը¹։ Փոքր Հայք, Շուկը-Աղձնիք, Տուրուբերան, Վասպուրական, Բարձր Հայք, Գուգարք-Տայք, Արցախ-Ռւալիք, Սյունիք, Այրարատ, Պարսկահայք, որոնցից յուրաքանչյուրը ստորաբաժնվում է ենթամարզերի։

Նշված մարզերը հիմնականում կազմավորվել են Հայկական բարձրավանդակի գլխավոր երկրագործամշակույթային գոտիների շրջանակներում, հինավուրց տոհմայեղային հանրույթների հիմամբ։ Այդ գոտիները չորսն են, որոնք համընկել են հայոց տնտեսական, քաղաքական և մշակույթային կյանքի կենտրոններ գարձած, բարձր զարդարած պատմամշակույթային մարդերի՝ երգնկայի, Խարբերդի, Վանի, Այրարատի ջրաբերուկային հարթակայրային հովիտների հետ։ Այդ չորս կենտրոններին համարատասխան սլատմազգաղբական խոշոր մարզեր են եղել. ա. Բարձր Հայքը (Երդնկաւերդինջան, Կարին-Էրդրում, Կարս-Բասին), թ. Շուկը-Աղձնիքը (Քարբերդ-Խարբերդ, Տիգրանակերտ-Դիարբեքիր), գ. Վասպուրական-Տուրուբերանը (Վանա լճի ավաղան, Մուշ-Տարոն), դ. Այրարատ-Սյունիքը (Արարատյան հովիտը և դրան հարող փոքր Կովկասի լեռնազանդվածը)²։

Հայկական բարձրավանդակի էթնիկ կազմավորումների և դրանց մշակույթի ուսումնասիրությունը՝ սունչված յուրաքանչյուրի տեղի և դերի բնութագրմանը, հայ ժողովրդի էթնիկական ձևավորման և մշակույթի զարգացման գործընթացքում, բարդ ու գժվարին խնդիր է։ Հայոց պատմական կյանքի յուրօրինակությունը, ըստ երեսույթին, բացատրվում է այն հանդամանքով, որ Հայկական բարձրավանդակում տարաբնակված էթնիկ

¹ Ս. Ե. Բ. և մ. յ. Ն. Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի. Երևան, 1963:

² Տե՛ս Հարուստական Կավազա (серия "Народы мира"), т. 2, М., 1962, с. 440.

հանրույթները տակավին հայ ժողովրդի կազմավորման արշալույսին դրեթի լիսվին կորցրել էին իրենց տոհմացեղային առանձնահատկությունները՝ վերածվելով բնատարածքային կենցաղամշակութային մարզերի³, մինչդեռ համանման հանրույթների մնացուկները՝ հստակորեն ընդգծված յուրատիպությամբ, հարևան երկրներում (Վրաստան, Ադրբեջան, Հյուսիսային Կովկաս, Դաղստան) պահպանվում էին ընդհուպ մինչև XIX դ. վերջերը, իսկ որոշ գետքերում նկատելի են նույնիսկ այսօր:

Այնուհանդերձ, չնայած դրան և օտար զավթիչների պատճառած հայերի սլարքերական զանդկածային արտագաւառին, ինչպես նաև ներգաղթերին, մինչև XX դ. սկիզբը պահպանվել էին Հայաստանի հիմնական ՊԱՄ-երը՝ իրենց ենթամարզերով, տնտեսամշակութային յուրահատկություններով:

Այսպես, Փոքր Հայքի ՊԱՄ-ը հյուսիսից հարավ ձգվել է Տավրոսի լեռներից մինչև Գայլ (Լուկոս) գետը, արևելքից արևելուտք՝ Կապադովկիայից մինչև Մեծ Հայքի սահմանները, ընդգրկելով Առաջին Հայքը և Երկրորդ Հայքը⁴: Փոքր Հայքին հարավ-արևելքից հարում են Ծոփքն ու Աղձնիքը, որոնք ճիշտ կլիներ համարել մի միասնական ամբողջական՝ Ծոփք-Աղձնիք ՊԱՄ, որը տարածվում է Արածանի գետի ստորին հոսանքից՝ Եփրատ գետից, դրեթե մինչև Վանա լճի ավաղանը:

Բարձր Հայքի ՊԱՄ-ը դրադեցրել է Եփրատ գետի վերին հոսանքը՝ Փոքր Հայքի հյուսիսարևելյան սահմանից մինչև Այրարատի ՊԱՄ-ը, ներառելով Կարինի, Բասենի, Վանանդի և Շիրակի բարձրավանդակները: Հայկական բարձրավանդակի դրեթե կենտրոնում է Տուրուբերանի (Տարոն-Մուշի) ՊԱՄ-ը. այն դրադեցրել է Արածանի գետի վերին հոսանքը և Վանա լճի հյուսիսարևմտյան ափերը, արևելքում ներառել է Բագրեանդի ու Կոգովիտի գալառները և ձգվել մինչև Մասիս լեռան լանջերը: Վասպուրականի ՊԱՄ-ը (Կողճայք-Մոկսով հանդերձ) զբաղեցրել է Վանա լճի ավաղանի արևելյան տարածքը՝ մի կողմից հարելով Այրարատի ՊԱՄ-ին, մյուս կողմից՝ Սյունիքին: Այրարատի ՊԱՄ-ը տարածվել է Արաքս գետի վերին հոսանքում հասնելով մինչև Մասիս լեռան լանջերը: Հայկական բարձրավանդակի հյուսիս-արևելքում են Գուգարքի (Նաև՝ Տայք), արևելքում՝ Արցախի (Նաև՝ Ուտիքի), հարավ-արևելքում՝ Սյունիքի ու Պարսկահայքի ՊԱՄ-երը: Արցախը սերտորեն հարում է Սևանա լճին, իսկ Սյունիքը լին ընդգրկում է իր բնատարածքում.

Արածանի գետի, Արաքս ու Եփրատ գետերի վերին հոսանքների բարեբեր հովիտներում, Վանա և Սևանա լճերի ավաղաններում, այսինքն՝ Հայկական լեռնաշխարհի գլխավոր երկրագործամշակութային գոտիների շուրջը ձևավորվել են նախահայկական պետաքաղաքական կազմավորում-

³ Հույն պատմիչ Ստրաբոնը (63-21/25 թթ.) հաղորդում է, որ «Հայաստանը սկզբում փոքր է եղել... Այնուհետև... ծափալվեցին (աջ ու աջակ, վար ու վեր՝ ՞՞ վ.): Այսպիսով, բոլորը միալեզու են» (Տ թ ա Յ օ, XI, 14.5): Այդ միալեզվությունն արգասիք էր «ծափալմանը» նախորդած ցեղասերման (էթնոցենեղի) դործընթացների, որոնցով մեկ հազարամյակի վեր «համակվել էր Հայկական լեռնաշխարհը» (տես Հայ ժողովրդի պատմություն. Հ. Երևան, 1971, էջ 530):

⁴ «Գորս Հայքեր»-ի պատմաքաղաքական կարդավիճակի վիճահարույց ինդիրը քննարկվել է հայ պատմագրության մեջ, որի վերջին անդրադարձը տեսական է ու թիւ ու թիւ ու նաև «Աշխարհացոյց»-ը և Զորս Հայքերի ինդիրը. Երևան, 1997:

ները. Դարեր ի վեր դրանք եղել են հայ մշակույթի կենտրոններ՝ համընկնելով հայոց վերը նշված տնտեսական և քաղաքական կյանքի կենտրոններին⁵: Այս հարցերին վերաբերող բավականաչափ նյութեր են պարունակում հնագիտական (հնէազգագրական) և գրավոր աղբյուրները, որոնք հանգամանորեն ուսումնասիրված են: Ինչ վերաբերում է ժողովրդական մշակույթին, որի հիմնական աղբյուրն ազգագրական նյութն է, ապա այն ևս լինելով բազմակողմանիորեն հետազոտված, տակավին կարոտ է մասնագիտական, հատկապես ըստ պատմազգդագրական մարզերի և ենթամարզերի գասդասման ու ընդհանրացման: Ազգագրական նյութի օգնությամբ հաճախ հստակորեն ուրվագծվում են սննդեսամշակութային տիպերի (ՏՄՏ) բնատարածքային ու էթնիկական տարածման սահմանները, դրանով իսկ բնորոշվում են նաև ՊԱՄ-երը: «Տնտեսամշակութային տիպեր ասելով պետք է հասկանալ տնտեսության և մշակույթի յուրահատկությունների պատմականորեն կազմավորված համալիրներ՝ բնորոշ որոշակի բնաշխարհագրական պայմաններում բնակվող և սոցիալ-տնտեսական զարգացման որոշակի մակարդակում գտնվող ժողովուրդների»⁶: Սույն դրույթը լիովին կիրառելի է նաև ներէթնիկ ՏՄՏ-երի վերաբերյալ:

Հետազոտվող պարբերագրությունը որոշակի հատվածում (XIX դ. 2-րդ կես – XX դ. սկիզբ) Հայաստանի բնատարածքում գոյություն են ունեցել պատմականորեն կաղմագրոված զանազան ՏՄՏ-եր, որոնց տարածման շրջանակները համապատասխանել են այս կամ այն ՏՄՏ ստեղծած և դրանք կը որոշակի էթնիկ հանրույթների տարածման շրջանակներին:

Առկա նյութերի (ազգագրական, գրավոր, լեզվաբանական և այլն) պատմահամեմատական վերլուծությամբ հավաստվում է, որ նշված շրջափուլում Հայաստանի բնատարածքում գործառվել են հետևյալ ՏՄՏ-երը.

Ա. Գլխավորապես գոյութանային երկրագործության և մսուրային-հեռագնա անասնապահության հիմամբ համակարգված երկրագործական-անասնապահական տնտեսություն վարող նստակյաց երկրագործների տիպ:

Բ. Հիմնականում սարային (արոտային) տնտեսություն վարող, մեծ մասմբ մանր եղջերագոր անասուն պահող և երկրագործության սաղմնային ձևերով զբաղվող կիսավաչկատուն /ա/ և վաչկատուն /թ/ անասնապահների տիպ:

Գ. Տնտեսավարման վերաբերուկային վաղեմի տիպեր, օրինակ. ա/ համարքություն, բրիչային և խամահատա-հրկիզային երկրագործություն, թ/

⁵ Հայ մշակույթի խոշոր կենարոն է եղել նաև Կիլիկյան Հայաստանը, ուր շուրջ 300 տարի (1080-1375) գոյատևել է հայոց պիտականությունը և ուր հայերը զանդվածապար ապրել են մինչև XIX դ. առաջին տասնամյակները (այսինքն՝ մինչև Մեծ եղեռնը): Այն ազգագրություն կարելի է բաժանել երկու՝ լեռնային ու հովտային (ծովափնյա) գոտու (տե՛ս Ղ. Ա. ի շ ա ն. Սիսուան, Համագործիւն Հայկական Կիլիկիոյ և Լեռն Մեծագործ. Վենետիկ. Առաջ Ղազար, Բագրե-1885): Հայոց մշակութային կյանքում կարելոր գեր է խալացել տարբեր ժամանակներում արտերկրներում կազմավորված Հայկական Սփյուռքը (տե՛ս Ա. Գ. Բ ը ա մ յ ա ն. Համառու ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Հ. Ա. Երևան, 1964, հ. Բ. Երևան, 1967), որոնց ազգագրական բնութագիրը ներկայացնելը տվյալ հոդվածի ինդիրը չէ:

⁶ М. Г. Л е в и н и Н. Н. Ч е б о к с а р о в. Хозяйственно-культурные типы и историко-этнографические области (к постановке вопроса).— "Советская этнография" (այսուհետև՝ СЭ), 1955, № 4, с. 4.

որսորդություն, ձկնորսություն և մեղրահավաքություն՝ այդ ամենը սերտորեն շաղկապված վերոհիշյալ ՏՄՏ-երի հետ:

Նյութական մշակույթի համալիրների բաղդատական տիպաբանական հետազոտությունը վերոհիշյալ ՏՄՏ-երի բացահայտմամբ (ինչպես տարածական, այնպես էլ ժամանակագրական առումներով) հնարավորություն կը նձեռի լայնորեն բացահայտելու այս կամ այն ՏՄՏ-ը կրող և համապատասխանաբար այս կամ այն ՊԱՄ-ի կազմի մեջ մտնող (առանձին կամ հարակից) էթնիկ կամ ենթաէթնիկ խմբերի մշակութակենցաղային հմտությունների յուրահատուկ կողմերը, քանի որ մշակութային արժեքներն ստեղծում են որոշակի էթնիկ հանրույթները որոշակի բնատարածքներում և ժամանակագրական շրջանակներում միջէթնիկ սերտ փոխազդեցությամբ⁷: Այդ առումով հատուկ ուշադրություն են արժանի նյութական մշակույթին, մասնավորապես ժողովրդական բնակարանին ու տարապին վերաբերող հարուստ նյութերը:

Այսպես, ժողովրդական բնակարանի «գլխատուն» տիպը Հայկական բարձրավանդակում լինելով համընդհանուր՝ առնչված աշխարհագրտկան, բնավայրիմայական և տնտեսամշակութային գործոններին, առանձին ՊԱՄ-երում ունեցել է յուրատեսակ տարբերակներ⁸: Գլխատունն առհտսարակ նստակյաց, երկրագործա-այգեգործաանասնապահական տնտեսություն վարող ժողովրդին բնորոշ բնակարանի տիպ է, որպիսին եղել է հայ ժողովուրդը վաղնջագույն անցյալից: Միանգամայն կատարյալ շինարարական հմտությամբ և ճարտարապետական ձևավորմամբ հայտնի է Բարձր Հայքի գլխատունը, որը համեմատաբար լավ է հետազոտված և կոչվում է «հազարաշեն տուն»: Դա միհարկանի գմբեթարդ շինություն է, միասնական բարդ համակառույցով՝ գրեթե բոլոր օժանդակ տնտեսական և բնակելի տենքերը համախմբած մի տանիքի ներքո: Տվյալ համալիրը լավագույնս հարմարեցվութ է լեռնային խոտագույն պայմաններում երկրագործականանասնապահական տնտեսություն վարելուն և ընտանեկան համայնքի (գերդաստան) բնակմանը: Դրա հիմնական բաժանմունքը քառակուսի հատակագծով բնակարանն է (մինչև 60-80 քմ. մակերեսով՝ ամրակուռ հիմ-

⁷ Սույն եղբահանգումները հիմնադրութների ձևով հրատարակված են. անը Դ. Ս. Վարդյան. Историко-сравнительная характеристика хозяйствственно-культурных типов Армении. — Всесоюзная сессия по итогам полевых этнографических исследований 1980-1981 гг. Нальчик, 1982, с. 196-197.

⁸ Փ. Տ ե ր - Մ ո վ ս ի ս ե ա ն ց ։ Հայ դյուզական տունը. Վիեննա, 1894: Խ. Վ. Բ. Լ ի ն չ. Արմենիա: путевые очерки и этюды. Ч. 1. Русские провинции, Тифлис, 1910; Մ. Ի լ ի ն ա. Древние типы жилища Закавказья. — НИИТА АН СССР, вып. 5, М., 1946; Ս. Դ. Լ ի ս ի ա ն. Очерки этнографии дореволюционной Армении. — "Кавказский этнографический сборник" (այսուհեակ՝ ԿЭС), т. 1, М., 1955, с. 182-264, Ս. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն յ ա ն. Հայաստանի դյուզական բնակավայրերի ճարտարապետությունը. Երևան, 1956, Ա. Վ. Կ ա ր դ ա ն յ ա ն յ ա ն. Հայկական ժողովրդական բնակելի տների ճարտարապետությունը (պատմական ակնարկ). Երևան, 1959, Նароды Кавказа, ч. 2, М., (Դ. Ս. Վարդյան. Հայ դյուզական բնակարանը. Գ. Երևան, 1967, Ա. Տ. Մ ա ր ս տ յ ա ն. Ին- տեր'յեր արմանական ժամանակական արժեքներ. Գ. Երևան, 1989: Դ. Ս. Վ. Կ ա ր դ ա ն յ ա ն. Հայ ազգագրություն և բանահյուսություն (նյութեր և ուսումնասիրություններ) (այսուհետեւ՝ ՀԱՐ), պր. 17, Երևան, 1989: Դ. Ս. Վ. Կ ա ր դ ա ն յ ա ն. Հայոց ժողովրդական բնակարանը (գլխատուն) սրբարան. — Հայոց սրբերը և սրբավայրերը. Երևան, 2001:

նապատերով, հաճախ կիսադետնափոր, կամարակապ տանիքով (հազարաշն): Դրան առընթեր են մառանը և գոմը, ըստ որում, բնակարանի հետ մառանը հաղորդակցվում է անմիջականորեն՝ ետնամուտքով, իսկ գոմը՝ շքամուտքով, ծածկած բակի միջոցով: Բնորոշ է գոմին առընթեր սենյակը (օդա)՝ տղամարդ անասնապահների ձմեռային կացարանը (այստեղ ձմեռը տեռում է 5-6 ամիս), նաև հյուրասենյակ, մինչդեռ տունը՝ մառանով հանդերձ, կանանց տրամադրությանն էր հանձնված, ուր նրանք զբաղվում էին տնային տնտեսությամբ: Անսանապահությունից բացի, տղամարդիկ, ընդարձակ ծածկած բակում, հատկապես ձմռանը, զբաղվել են նաև հենց այդ նպատակին հատկացված տնայնագործությամբ⁹: Բնակարանի այդ տիսը տարածված է եղել Եփրաս գետի վերին հսանքից դեմք հյուսիսարևելք, ընդհուպ մինչև Փոքր Կովկասի լեռնաշղթան և, հայերից բացի, հայտնի է եղել նրանց հարեանությամբ ապրած Զավախքի վրացիներին:

Բնակարանի նշված տիսի համեմատաբար պարզ ու հասարակ տարբերակ է կենցաղավարել Տուրուբերանի, նաև Շոփիք – Աղձնիքի ՊԱՄ-ում, որը Հայկական Տավրոսից ծգվում է մինչև Հայկական պար լեռնաշղթան:

Սկսած 1830-ական թվականներից, համաստափախան ազգագրական խմբերի ներգաղթի հետևանքով, այդ տարբերակը լայնորեն տարածվեց Սյունիքի ՊԱՄ-ի Գեղարքունիքի ենթամտողում և Այրարատի ՊԱՄ-ի Արագածոտնի ենթամարդում: Ակնարկային ձևով, սակայն, դիսլուկ է դիտարկված Գեղարքունիքի բնակարանը,¹⁰ որը հնարավորություն է ընձեռում առհասարակ պլատկերացում կազմելու Տուրուբերանի ՊԱՄ-ի բնակարանի վերաբերյալ:

Բուն Արցախի¹¹, Սյունիքի¹², Գուգարքի ՊԱՄ-երի բնակարանը նախորդներից տարբերվում է այն բանով, որ բնակելի տունը և օժանդակ տնտեսական կառույցները միմյանցից մեկուսի են, մինչդեռ մյուս բոլոր մարդերում բնակելի և անտեսական կառույցների համալիրները մի ամբողջություն են կազմել և միմյանց հետ հաղորդակցվել են ծածկած բակի միջոցով: Սյունիքում և Արցախում եղել են նաև ժայռափոր բնակարաններ (քերծի տիպ), որոնց առընթեր են օժանդակ կառույցները՝ շինված «սողոմաքաշ» տիպով (հաղարաշենի պարզունակ տարբերակը): Այդպիսի անձաւվատներ դարերի վեր գոյություն են ունեցել (ընդհուպ մինչև 1950-ական թվականներ) Սյունիքի Խնձորեսկ, Շինուհայր (Շնէր), Վերին Շեն, Տեղ,

⁹ С. Ա. Լ ի ս ի ա ն. Քրետյան քաղաքացիության պահպանը և արագածական գույքի պահպանը Հայոց պատմության մեջ. Երևան, 1988: Ա մ. Լ ի ս ի ա ն. Հայունական գույքի պահպանը Հայունական գույքի պահպանը. Երևան, 1981: Ա մ. Լ ի ս ի ա ն. Հայունական գույքի պահպանը Հայունական գույքի պահպանը. Երևան, 1982:

¹⁰ С. Ա. Լ ի ս ի ա ն. Խոբեյան ազարաշ և շատ անձաւվատներ Հայունական գույքի պահպանը Հայունական գույքի պահպանը. Երևան, 1982: Ա մ. Լ ի ս ի ա ն. Հայունական գույքի պահպանը Հայունական գույքի պահպանը. Երևան, 1983: Ա մ. Լ ի ս ի ա ն. Հայունական գույքի պահպանը Հայունական գույքի պահպանը. Երևան, 1984: Ա մ. Լ ի ս ի ա ն. Հայունական գույքի պահպանը Հայունական գույքի պահպանը. Երևան, 1985: Ա մ. Լ ի ս ի ա ն. Հայունական գույքի պահպանը Հայունական գույքի պահպանը. Երևան, 1986: Ա մ. Լ ի ս ի ա ն. Հայունական գույքի պահպանը Հայունական գույքի պահպանը. Երևան, 1987: Ա մ. Լ ի ս ի ա ն. Հայունական գույքի պահպանը Հայունական գույքի պահպանը. Երևան, 1988: Ա մ. Լ ի ս ի ա ն. Հայունական գույքի պահպանը Հայունական գույքի պահպանը. Երևան, 1989: Ա մ. Լ ի ս ի ա ն. Հայունական գույքի պահպանը Հայունական գույքի պահպանը. Երևան, 1990: Ա մ. Լ ի ս ի ա ն. Հայունական գույքի պահպանը Հայունական գույքի պահպանը. Երևան, 1991: Ա մ. Լ ի ս ի ա ն. Հայունական գույքի պահպանը Հայունական գույքի պահպանը. Երևան, 1992:

¹¹ Ա մ. Լ ի ս ի ա ն. Հայունական գույքի պահպանը Հայունական գույքի պահպանը. Երևան, 1988: Ա մ. Լ ի ս ի ա ն. Հայունական գույքի պահպանը Հայունական գույքի պահպանը. Երևան, 1989: Ա մ. Լ ի ս ի ա ն. Հայունական գույքի պահպանը Հայունական գույքի պահպանը. Երևան, 1990: Ա մ. Լ ի ս ի ա ն. Հայունական գույքի պահպանը Հայունական գույքի պահպանը. Երևան, 1991: Ա մ. Լ ի ս ի ա ն. Հայունական գույքի պահպանը Հայունական գույքի պահպանը. Երևան, 1992:

Հալիճոր, Կյորես դյուղերում (Գորիսի ՎՃՇ), ուր նույնիսկ ձիթհանը ժայռափոր է եղել¹³: Պաշտպանական նկաառումներով այդ դյուղերը տեղադրված են եղել ժայռերի բարձրաբերձ լանջերին, անդնդախոր, թշնամիներին անմատչելի խորխորատ կիրճերում: Արցախի հայոց բնակարանի հետ գրեթե նույնական են նստակեցության անցած հարեւան աղբբեջանցիների ու քրգերի բնակարանները¹⁴:

Գուգարքի ՊԱՄ-ին բնորոշ է եղել Լոռու ենթամարդի բնակարանը, որը նման լինելով Սյունիքի ու Արցախի բնակարանին, գրանից տարբերվել է շինանյութով, այսինքն՝ այն բանով, որ ոչ թե ժայռափոր, այլ վերդեմնյակառուց է եղել: Ի տարբերություն Բարձր Հայքի, Գուգարքի բնակարանը, համեմատաբար բարեխառն (մեզմ) կիմայի շնորհիվ, ունեցել է ընդունակ սյունաշարով պատշտամբատիւլ սրահ (սհար)¹⁵:

Բոլորովին այլ տիպ է եղել Այրարատի ՊԱՄ-ի բնակարանը՝ տափակ կտուրով, առանձին շինքած խոհանոցով և հնձան-մառանով: Այն շրջափակված է բարձր ցանկալատով, ունի ճարտարապետորեն ձևավորված դարպաս: Այստեղի տները ճակատով ուղղված են խուլ պատով ցանկալատված վերաբաց բակին, ուր արգել են գրեթե բոլոր տնտեսական գործերը: Եթե Բարձր Հայքի¹⁶ բնակարանի տիպում բնակելի մասը և տնտեսական օժանդակ կառույցները հիմնականում հարմարեցված են անասնապահական տնտեսավարմանն ու բարձրալեռնային խիստ կիմային, ասլա Այրարատում¹⁷ բնակարանը հարմարեցված է խաղողագործական-այգեգործական անասությանն ու չոդ կիմային:

Հարավ-արևելքից Տուրուբերանին հարող կասպուրականի ՊԱՄ-ը բնակարանի սիմով կապված է, մի կողմից՝ Տուրուբերանի և Աղձնիքի (Շատավա-Մոկս-Մասուն գծով), մյուս կողմից՝ Այրարատի և Սյունիքի (Նախիջևանի ենթամարդի միջոցով) հետ: Կասպուրականին առավել բնորոշ է Հայոց ձորի գավառը (Վան քաղաքը՝ մերձակայքով), ուր բնակարանը երկհարկանի է եղել, տափակ կտուրով, հարմարեցված առավելապես այգե-

¹³ Ժայռափոր կաւույցներ Հայաստանում եղել են վաղեմի ժամանակներից: Առավել հայանիներց են Գեղարդավանքի հոմալիրը (XII-XIII դդ.), ինչպես և Անիի մասնադիտուրեն հասալուած քարանձավները: Տե՛ս Դ. Ա. Կ ի պ ի ա զ է. Պեղեր Ան (մատերիալների հայաստանի միջոցով) հետ: Վասպուրականին առավել բնորոշ է Հայոց ձորի գավառը (Վան քաղաքը՝ մերձակայքով), ուր բնակարանը երկհարկանի է եղել, տափակ կտուրով, հարմարեցված առավելապես այգե-

¹⁴ Տ. Ա. Լ ի ս ի ց ա հ. Կ ի չ յ ս ի ա ն. Լուեցիների նոր կենցաղը. Երևան, 1955, Ա. Պ ի - պ օ յ ա ն. Պոտություններ գույքանում. Երևան, 1957.

¹⁵ Դ. Վ ա ր դ ո ւ մ յ ա ն. Լուեցիների նոր կենցաղը. Երևան, 1955, Ա. Պ ի - պ օ յ ա ն. Պոտություններ գույքանում. Երևան, 1957.

¹⁶ Բ. Գ. Թ ո ւ լ ա ք յ ա ն. Համշենահայերի ազգագրությունը. — ՀԱԲ, պր. 13, Երևան, 1981, Ղ. Ա լ ի շ ա ն. Հիրակ. անդամականացություն պատկերացոյց. Վենետիկ-Մ. Ղաղար, 1881, Մ. Մ ա թ ե ռ ս յ ա ն. Գյումբիլի ժողովրդական ճարտարապետությունը. Երևան, 1985: Կ. Վ. Ս ե ղ բ ո ս յ ա ն. Արհեստավորական ավանդույթները և դրանց արտաշայտությունները լենինականցիների կենցաղում. — ՀԱԲ, պր. 6, Երևան, 1974:

¹⁷ Ղ. Ա լ ի շ ա ն. Այրարատ, Էնցիքարհ Հայաստանեաց. Վենետիկ-Մ. Ղաղար, 1890: Ե. Շ ա հ ա գ ի զ. Հին Երևանը. Երևան, 1931, 2003, Ռ. Ա. Գ յ ո լ խ ա ս յ ա ն. Ջիլիե դոմա կոլխոզников հիմնական հայոց պատմությունը. Աշտարակի շրջանի ժողովական բնակարանի ճարտարապետությունը. Երևան, 1960: Է. Ն. Հ ա կ ո բ յ ա ն. Աշտարակի շրջանի ժողովական բնակարանի ճարտարապետությունը. Երևան, 1964:

գործական տնտեսությանը¹⁸, մինչդեռ բարձրալեռնային վայրերում (Շատախ, Մոկս) տարածված է եղել պարզունակ կիսագետնավորը, հարմարեցված անասնապահական զբաղմունքին ու լեռնային երկրագործությանը¹⁹ և տիպով ավելի մոտ է հարեան Սասունի բնակարանին²⁰:

Յուրահատուկ տեղ է բռնում Փոքր Հայքի բնակարանը: Դրան հատուկ են ցանկապատված բակով երկհարկանի տները, որոնց ստորին հարկում տեղադրված են տնտեսական օժանդակ կառույցները (գոմ, ախոռ և այլն), վերինը բնակելին է, տանիքը՝ չորանոց, գյուղմթերքների պահեստ:²¹

Այսպիսով, հայոց ժողովրդական հնավանդ տան (գլխատուն) համակարգված բնութագրումը հնարավորություն է ընձեռում ուրվադելու ոչ միայն հիմնական ՊԱՄ-երի, այլև երբեմն նաև ենթամարզերի սահմանները: Գրեթե այդպիսի դասակարգման են ենթարկվում հայ ժողովրդի նյութական մշակույթի մյուս բնագավառներին վերաբերող նյութերը ևս:

Հանգամանորեն ուսումնասիրվել են նաև երկրագործական-անասնապահական մշակույթը,²² տարազը,²³ ավանդական կիրառական արվեստի առանձին դրսեկորումները,²⁴ փոխադրամիջոցները²⁵ և տնաւեսամշակութային այլ բնագավառներ (մեղվապահություն, շերամապահություն, ձիթհանություն, չափաբանություն և այլն)²⁶, որոնց տիպերի տարածման շրջաններն ընդհանուր առմամբ գրեթե համընկնում են բնակարանի տարածման շրջաններին: Այս բայրո խնդիրների հետագա բազմակողմանի համակրումը հնարավորություն կընձեռի ամբողջական պատկերացում կազմելու հայոց տարբեր պատմագաղադրական խմբերի ստեղծած մշակույթի հանրագումարի, հետևաբար նաև հայ ժողովրդի ազգային մշակույթի ժողովրդական ակունքների մասին:

¹⁸ Ս ե ր ի ն ե (Ս. Ա վ ա գ յ ա ն ն). Արճակի ազգագրությունն ու բանահյուսությունը. – ՀԱԲ, պր. 8, 1978:

¹⁹ Ս. Դ. Լ ի ս ի ա հ. Իсторико-этнографические очерки Шатаха (из материалов по изучению жилищ Армении). – ИКИАИ, т. V, Тифлис, 1927; И. А. О р ե լ ի. Փօլքլօր և բանահյուսությունը. – Երևան, 1982.

²⁰ Ե. Կ ա ր ա պ ե տ յ ա ն. Սասուն (ազգագրությունը). Երևան, 1963, Վ. Պ ե - տ ո ւ ա ն ա ն. Սասունապահությունը. Երևան, 1965:

²¹ Վ. Թ ե մ ո ւ ր ճ յ ա ն. Գամիրքի հայերը (պատմազգագրական ուսումնասիրություն). – ՀԱԲ, պր. 1, Երևան, 1970, Ա ռ ա ք ե լ ն. Պ ա տ ր ի կ կ. Պատմագիրք յուշամատեան Սերասահիոյ և գավառի հայութեան. Հ. Ա. Պեյրութ, 1974, Հ. Բ. Նյու-Ձբրգի, 1983, Գ. Հ ա լ ա յ ջ յ ա ն. Դերսիմի հայերի ազգագրությունը. մասն Ա. – ՀԱԲ, պր. 5, Երևան, 1973, Կ. Զ ե ր ք ե լ յ ա ն. Աֆիոն-Կարահիսարի գաղթօջախիը (պատմազգագրական ակնարկ). Երևան, 1986:


²² Վ. Հ. Բ գ ո յ ա ն. Երկրագործական մշակույթը Հայաստանում. Երևան, 1972; Խ. Ի մ կ ր տ ս յ ա ն. Ֆормы скотоводства в Восточной Армении. – "Армянская этнография и фольклор", вып. 6, Ереван, 1974:

²³ Ա. Պ ա տ ր ի կ. Հայկական տարազը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը. Երևան, 1967:

²⁴ Վ. Ս թ ե մ ո ւ ր ճ յ ա ն. Գորգագործությունը Հայաստանում. Երևան, 1955, Ս. Դ ա վ թ յ ա ն. Հայկական ժանյակ. Երևան, 1966, Ա ռ յ ա ն ի Հ այկական ասեղնագործություն. Երևան, 1972, Ա ռ յ ա ն ի Հ այկական կարսկեան. Երևան, 1975, Ե. Ս. Ս ա ր է կ ի ս յ ա ն. Գոնчарное искусство Армении. Ереван, 1978.

²⁵ Լ. Ն. Պ ա տ ր ո յ ա ն. Հայ ժողովրդական փոխագրամիջոցները. – ՀԱԲ, պր. 6:

²⁶ Պ. Օ. Վ ա ր ձ ա ն ի ա ն. Системы мер длины и поверхности земли в Армении (историко-этнографическое изучение)(автореф. канд. дис.). Ереван, 1970. Ա. Ս. Պ ե տ ր ո յ ա ն. Հայոց շերամապահական մշակույթը (պատմազգ. ուսումն, այսուհետև՝ ՊԱՄ). Երևան, 1987. Ա. Օ. Գ ա ս ս պ ա ր յ ա ն. Մեղվաբուծությունը Հայաստանում. – ՊԱՄ, 1989, Ա. Գ ա ս ս պ ա ր յ ա ն. Հայոց ձիթհանության մշակույթը (ՊԱՄ, թեկն. ատենախոս. սեղմագիր), 1998:



Բ. Հայաստանի Հանրապետություն և Հարակից մարգեր
Հայաստանի Հանրապետության և Հարակից Հայաբնակ բնատարածք-
ներն աղքագրական առումով կարելի է բաժանել երկու գլխավոր՝
արևմտահայ և արևելահայ տարաբնակման մարզի: Դրանք կազմավորվել
են 1830-ական թվականներն՝ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին
միացվելուց հետո: Այդ տարիներին Թուրքիայի տիրապետությանը ենթա-
կա Արևմտյան Հայաստանից և Իրանից (Հատկապես Պարսկահայքից) Հա-
յերի հոծ զանդքածներ գաղթեցին Արևելյան Հայաստան և Հաստափեցին
Արևելյան Հայաստանի արևմտյան և կենտրոնական շրջաններում՝ Ծիրա-
կում, Արագածոտնում, Արարատյան հովտում, Գեղարքունիքում և Վայոց
ձորում:

Արևելյան Հայաստանի մյուս մասը՝ Լոռին, Տավուշը, Սյունիքը, Արցա-
խը (նաև՝ Ուտիքը), Նախիչևնը, Հիմնականում պահպանել էր բնիկ հայ
ընակչությունը, ընդումին՝ նաև կենցաղի և մշակույթի արևելահայ յուրա-
հատկությունը:

XVI դ. Արևմտյան Հայաստանը ենթակա է եղել Թուրքիայի, իսկ Արևե-
լյան Հայաստանը (մինչև XIX դ. սկզբները՝) Իրանի տիրապետությանը:
Չնայած հայերն ունեն հինավուրց համազգային հարուստ մշակույթ, ժո-
ղովրդի երկու մասի տեսական մեկուսացվածությունը դրսեորվել է լեզվում
(մասնավորապես գրական լեզվի արևմտահայ և արևելահայ տարբերակնե-
րի կաղմանավորմամբ), մշակույթում և կենցաղում:

Այդ երկու գլխավոր համազգի (համէթնիկ) հանրույթների ներսում առ-
կա է 10 պատմազգագրական մարզ, որոնցից չորսը արևմտահայոց (Շիրակ,
Արագածոտն, Գեղարքունիք, Զավախք), վեցը՝ արևելահայոց (Լոռի, Տա-
վուշ, Սյունիք, Արցախ, Արարատ, Վայոց ձոր) տարաբնակման ոլորտում է:
Այդ մարզերի բնակչության կենցաղամշակութային յուրահատկություն-
ները կազմավորվել են որոշակի բնաաշխարհագրական և սահմաքաղա-
քական պայմաններում: Օրինակ՝ Արարատի և Վայոց՝ ձորի արդի հայ
ընակչությունը (ծագմամբ՝ հիմնականում Պարսկահայքից ներգաղթածնե-
րի հետնորդներ) հիմնականում ունեն ոչ միայն համանման, այլև հաճախ
նույնական գծեր: Այդուհանդերձ, այդ երկու մարզի բնակչուների տնտե-
սության մեջ, կենցաղում և սովորույթներում երկան են եկել առաջին հեր-
թին բնակչիմայական դանագանությամբ պայմանավորված յուրահատուկ
հատկանիշներ: Այժմ միմյանցից զգալապես տարբերվում են Դարույնքից
(Ալաշկերտ) գաղթածները, որոնց մի մասը տարաբնակվել է Շիրակի հյու-
սիսում (Աշոցքի շրջան), մյուս մասը՝ Լոռու հյուսիսում (Տաշիրի շրջան):
Նույն ալաշկերտցիների մեծ մասը, սակայն, տարաբնակվել է Գեղարքու-
նիքում (Մարտունու շրջան): Ըստ այդմ, եթե առաջինները (Շիրակինը և
Լոռունը) գավանանքով կաթոլիկ են, ապա վերջինները (Գեղարքունիքի-
նը)՝ առաքելական-լուսավորչական են:

Տվյալ գեպքում արդեն զգացվում է ոչ այնքան աշխարհագրական մի-
ջավայրի (որը գրեթե նույնական է), այլ առավելապես աղդագրականի աղ-
դեցությունը: Շիրակի ալաշկերտցիներն զգալիորեն համաձուլվել են
նույնպես Արևմտահայաստանից գաղթած լուսավորչականների հետ, Գե-
ղարքունիքի ալաշկերտցիները սերտաճել են նույնակալան գաղթական-

ների հետ, մինչդեռ Լոռիում տակավին զգացվում է գաղթական («ֆուանդ») ալաշկերտցիների հետնորդների և բնիկ լուսավորչականների տարբերակումը:

Հարկավ, վերոնշյալ սլատմաղգագրական մարզերի յուրահատկությունների աստիճանը տարբեր է. այսպես, օրինակ՝ նվազ նկատելի է եղել բուն տավուշցիների տարբերությունը մի կողմից՝ լուսեցիներից, մյուս կողմից՝ հարեան Աղբբեջանի հայարնակներից: Տավուշցիները յուրատեսակ կապող ողակ են լուսեցիների և հյուսիսից Լոռուն հարող Վրաստանի շրջանների հայերի միջև՝ մի կողմից, և Արցախի, Ուտիքի ու Սյունիքի միջև՝ մյուս կողմից: Այս պարագայում անցումն աղգագրական մի շրջանից մյուսը կատարվում է գրեթե աննկատ սահուն կերպով: Միաժամանակ տարբերությունը լուսեցիների (հյուսիսում) և սյունեցիների միջև իսկույն նկատելի է: Մեծ չեն տարբերություններն Արագածոտնի ու Գեղարքունիքի և Շիրակի ու Զավախի միջև, որոնք կազմում են երկու ուրույն սլատմաղգագրական գոտի: Խոկ ահա միմյանց սահմանամերձ Տավուշի և Գեղարքունիքի կամ Վայոց ձորի ու Սյունիքի և կամ Լոռու ու Շիրակի աղգագրական մարզերը հույժ նկատելիորեն զանազանվում են միմյանցից: Եվ գա միանդամայն հասկանալի է, եթե հաշվի առնվի, որ դրանք տարբեր պատմաղգագրական գոտիներում են:

Հարկ է նաև նկատի առնել, որ Արագածոտնի, Արարատի, Գեղարքունիքի և Վայոց ձորի աղգագրական մարզերում արեւմտահայերի ներդադիթի ժամանակ եղել են կենցաղի ու մշակույթի արեւելահայ յուրահատկությունը սլահալանած մի շարք գյուղեր, յոթը՝ Վայոց ձորում, Քանաքեռը, Վաղարշապատը և այլն՝ Արարատում, Աշտարակը, Օշականը, Փարպին, Բջնին, Կարբին (մասամբ)` Արագածոտնում: Արևմտահայերից նրանք, որոնք վերաբնակվել են արեւելահայերի միջավայրում (հինգ գյուղ՝ Տաշիրի շրջանում, մի քանի գյուղ՝ Սյունիքի շրջանում և այլն), նույնպես ցայսօր պահպանում են արեւմտահայոց կենցաղասովորութային մի շարք յուրատիպ գծեր:

Շիրակի ՊԱՄ-ի մեջ են նախկին²⁷ Աշոցքի (Ղուկասյանի), Ախուրյանի, Սպիտակի, Արթիկի, Անիի վարչատարածքային շրջանները (Վ.ՏՇ) և Գյումրի (Կումայրի-Ալեքսանդրապոլ-Լենինական) քաղաքը, Արագածոտնի ՊԱՄ-ի մեջ՝ Ալարանի, Արագածի, Աշտարակի, Թալինի, Նահրիի Վ.ՏՇ-ները, Արարատի ՊԱՄ-ի մեջ՝ Արմավիրի (Հոկտեմբերյանի), Վաղարշապատի (Էջմիածնի), Աբովյանի (Կոտայքի), Արտաշատի, Վեդու, Մասիսի Վ.ՏՇ-ները և Երևան քաղաքը, Գեղարքունիքի ՊԱՄ-ի մեջ՝ Հրազդանի (Ախտայի), Սևանի, Գավառի (Ն. Բայազետ-Կամոյի), Մարտունու, Վարդենիսի (Բասսարեչարի) Վ.ՏՇ-ները, Վայոց ձորի (Դարալագյազ) ՊԱՄ-ի մեջ՝ եղեղնաձորի (Քեշիշքենդ-Միկոյանի), Վայքի (Ազիզըեկովի) Վ.ՏՇ-ները և Ճերմուկ քաղաքը, Լոռու ՊԱՄ-ի մեջ՝ Ստեփանավանի, Տաշիրի (Կալինինոյի), Թումանյանի (Ալավերդու), Գուգարքի (Կիրովականի) Վ.ՏՇ-ները և Վանաձոր (Մ. Ղարաքիլիսա-Կիրովական) քաղաքը, Տավուշի ՊԱՄ-ի մեջ՝ Իջևանի,

²⁷ Վարչատարածքային շրջանների թվարկումը կոդնի կողմնորոշվելու գիտարշավային և գրավոր ու արիթմային նյութերից և սկզբնաղբյուրներից օգտվելիս, քանի որ գրանք ժամանակին գրառված ու գրանցված են ըստ այդ շրջանների:

Տավուշի (Շամշադինի), Նոյեմբերյանի, Ճամբարակի (Կրասնոսելսկի)²⁸ ՎՏԵ-ները և Դիլիջան քաղաքը, Սյունիքի ՊԱՄ-ի մեջ՝ Գորիսի, Կապանի (Ղափանի), Սիսիանի, Մեղրու (Արևիքի) ՎՏԵ-ները:

ՀՀ-ին հարակից հայաբնակ ՊԱՄ-երը և դրանցում ընդդրկված ՎՏԵ-ները հետևյալներն են. Զավախքի ՊԱՄ-ի (Վրաստանի կազմում) մեջ են Ախալքալաքի, Ախալցիայի, Նինոծմինդայի (Բոգդանովկայի), Ծալկայի, Ասպինձայի ՎՏԵ-ները, Արցախի (Լեռնային Ղարաբաղ) ՊԱՄ-ի մեջ՝ Շուշիի, Հադրութի, Մարտակերտի, Ասկերանի, Մարտունու, Շահումյանի ՎՏԵ-ները և Ստեփանակերտ քաղաքը, Ուտիքի ՊԱՄ-ի մեջ (Աղբքեջանի կազմում)՝ Քարհատի (Դաշքեսան), Խանլարի, Թովուզի, Շամխորի, Գետաբեկի ՎՏԵ-ները և Գանձակ (Կիրովաբադ-Գյանջա) քաղաքը, Նախիջևանի ՊԱՄ-ի մեջ (Աղբքեջանի կազմում)՝ Իլիչովսկի (Նորաշենի), Նախիջևանի, Շահբուզի, Ջուլֆայի (Ջուլայի) և Օրդուբաղի ՎՏԵ-ները:

* * *

Ազգագրական հետազոտության հիմքում սովորաբար լինում է «որևէ (մեծ կամ փոքր) բնատարածք՝ իր բնակչությամբ և մշակույթով»: Հայ ազգագրությունը որպես գիտություն կազմավորվելու հենց սկզբից նույնպես որդեգրել է այս սկզբունքը՝ չափանիշ ունենալով երբեմն՝ ժամանակի վարչատարածքային բաժանումը, երբեմն էլ՝ ավանդութային կենցաղամշակութային համար համարական բաժնեսա»-ի բոլոր հիմնական բաժինները, որոնք մեծիմասսամբ հեղինակել է «Հանդես»-ի հիմնադիր և խմբագրական բազմապես, բազմավաստակ երանդ Լալայանը²⁹:

Հիմնվելով աշխարհի ժողովուրդների մշակութակենցաղային երևույթների վերաբերյալ կուտակված և իրենց իսկ հետազոտած բազմաբովանդակ նյութերի ու երկասիրությունների վրա, խորհրդային ազգաբաններ Մ. Գ. Լեինը և Ն. Ն. Զեբոքսարովը 1950-ական թվականներին հանդես եկան պատմազդագրական մարզերի և տնտեսամշակութային ախալերի բնութագրման հիմնարար տեսությամբ³⁰: Սույն տեսությունն ընդհանուր առ-

²⁸ Սպիտակի ՎՏԵ-ն ազգագրուն ավելի հարում է Շիրակին, քան` Լոռուն, իսկ ճամբարակի ՎՏԵ-ը (բնակչուները հիմնականում արևելահայեր) Տալուշից կտրելը և Գեղարքունիքի վարչասարածքային արզպին (որի բնակչուները բացատապես արկմտահայոց հետոնորդներ են) միացնելը, ինչպես արված է ՀՀ Նոր վարչատարածքային ըստանմամբ, միանդաման անհիմն է: Կուզենայի նկատել տալ նաև ին ինհանական և Կամո քաղաքների անհանող, ինեղաթյուրված (թրքահունչ Գյումրի և Քյավար հորջորջումը (վերանվանումը), բացանելով առաջին նախալիք որոշված կումայրի, իսկ հաջորդի պատմական Գավառնի հայաշունչ տեղանունների վերականգնումը: Հաջող չէ նաև վանաձորը (որպես վերականգնվել է Կիրովական քաղաքը), իսկ սահական մասինները զարմանալիորեն հապաղում են դարձյալ թրքահունչ Ալավերդի քաղաքի վերականգնման հարցում: Այս ամենի առթիվ տես նաև Դ. Վ. արդի տեղանվանաբանության որոշ խնդիրներ.— Շիրակի Հայագիտական հետազոտությունների կենտրոնի (այսուհետև՝ ՇՀՀԿ) դիա. աշխ., III. Գյումրի, 2000:

²⁹ Տես «Ազգագրական հանդես», Շուշի-Թիֆլիս, 1895/96-1916 թթ.:

³⁰ Տես M. G. Լե և ի հ. Ա. Կ ե բ օ կ ս ա ր օ վ. Նշվ. աշխ., նաև՝ Պонятие о хозяйствственно-культурных типах и историко-этнографических областях.— «Очерки общей этнографии» (под ред. С. П. Толстова, М. Г. Левина, Н. Н. Чебоксарова), М., 1957, с. 41-56.

մամբ արժանացավ ոչ միայն խորհրդային, այլև արտասահմանյան մասնագետների հավանությանը, չնայած հետագայում որոշ գրույթներ քննադատվեցին ու ճշգրտվեցին երկուստեք³¹: Սույն տեսությունն առավել մշակված ու բովանդակալից կիրառմամբ գարգացվեց Մոսկվայի Մ. Վ. Լոմնոսովի անվան պետական համալսարանի պատմության ֆակուլտետի աղքադրության ամբիոնի թողարկած ծավալուն ուսումնական ձեռնարկում, ուր նշյալ հասկացությունները հագեցված են աշխարհի բոլոր ժողովուրդների՝ հատկապես նյութական մշակույթն ընդդրկող բազմարնույթնութերով³²:

Ընդհանուր ընութագրմամբ, «Պատմագրագրական մարդ ասելով հասկանում ենք մի բնատարածք, որտեղ բնակվող ժողովուրդների տեսական կապերի, փոխազդեցությունների ու պատմական ճակատագրերի ընդհանրություն»³³, յուրաքանչյուր պատմագրագրական խոչոր մարզի (Առաջավոր Ասիա, Կովկաս և այլն) մեջ են համեմատաբար փոքր ՊԱՄ-երը (Հայաստան, Վրաստան, Իրան և այլն), որոնք էլ իրենց հերթին տարաբաժանվում են առավել մանր մարզերի (Տուրուբերան, Այրարատ, Վասպուրական և այլն) ու ենթաւարզերի (Տարոն, Շիրակ, Հայոց Ճոր և այլն): Եվ ինչքան բնատարածքային ընդարձակ ընդդրկում ունի ՊԱՄ-ը, սովորաբար նույնքան էլ բազմէթնիկ է, իսկ այն որքան փոքր է, համեմատաբար սակավէթնիկ է, որը երբեմն միտված է լինում մենէթնիկության: Սույն հանդամանքներով էլ պայմանավորվում են ՊԱՄ-երի բնորոշումները:

Այսուհանդերձ, թե՛ մեծ, թե՛ փոքր ՊԱՄ-երը, ժամանակի ամենատարբեր սլարագանների բերումով, ենթարկվում են վերափոխությունների: «Ոչ բնորոշ յուրահատկությունները, ոչ պատմագրագրական մարզերի սահմաններն անփոփոխ չեն լինում: Բայց և ամեն մի կոնկրետ պատմական ժամանակամիջոցում պատմագրագրական մարզերը միանդամայն որոշակի իրողություն են ներկայացնում»³⁴:

Խնդրի գիտական հույժ կարևորության նկատառմամբ, հայ աղքադրական նյութերի և առկա ուսումնասիրությունների ընդհանրացմամբ, 1960-ական թվականներին ուրվագծեցին ինչպես պատմական Հայաստանի, այնպես էլ ժամանակի Խորհրդային Հայաստանի պատմագրագրական մարզերը՝ իրենց շրջաններով, ենթաշրջաններով և էթնիկ ու աղքադրական խմբերով՝ տնտեսամշակութային տիպերի ուրվագրմամբ հանդերձ:

Այդ անելու անհրաժեշտությունը հրատապ գարձավ հատկապես ԽՍՀՄ ԳԱ Աղքադրության ինստիտուտի ձեռնարկած «Աշխարհի ժողովուրդները» (ռուս.) բաղմահատոր մատենաշարի «Կովկասի ժողովուրդները» հատորի՝ Հայաստանին և Հայերին վերաբերող բաժինը շարադրելու կապակցությամբ: Այսուեղ անհրաժեշտ է մի կարևոր վերապահում անել՝ Մոսկվա-

³¹ Б. В. А н д р и а н о в. Хозяйственно-культурные типы и исторический процесс. — СЭ, 1968, № 2; Я. В. Ч е с н о в. О социально-экономических и природных условиях возникновения хозяйственно - культурных типов. — СЭ, 1970, № 6.

³² Основы этнографии, под ред. С.А.Токарева, М., 1968.

³³ М. Г. Л е в и н, Н. Н. Ч е бօկ ս ա ր օ վ. Նշ. աշխ., էջ 10:
34 Սույն տեղում, էջ 11:

յում հրատարակվող որևէ շարադրանքում, հատկապես եթե խոսքը վերաբերում էր խորհրդային ժամանակաշրջանին, մանավանդ եթե դա քարտեզագրվում էր, Արևելյան Հայաստան հասկացությունը պետք է սահմանափակվեր Խորհրդային Հայաստանի բնատարածքով: Ահա ինչու, նշված հատորում հայ հեղինակները, ըստ այդմ նաև տողերիս հեղինակը, երեսոյթները ներկայացրել են նշված շրջանակներում: Այսպիսով, Խորհրդային Հայաստանը բաժանվել է ութ պատմազդգրական շրջանի, որոնցում առանձնացվել է 11 ենթաշրջան: Անվանումների որոշ վերանայմամբ ու ճշգրտմամբ դրանք հետևյալներն են (Հյուսիսից հարավ հերթագայությամբ): Շիրակի, Լոռու, Տավուշի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Արարատի, Վայոց ձորի, Սյունիքի՝ յուրաքանչյուրը համապատասխան ենթաշրջաններով³⁵:

Ակներև է, որ այստեղ բացակայում են Արևելյան Հայաստանի մի քանի կարեռագույն պատմազդգրական մարզերը, որպիսիք են՝ Արցախը (Նաև Ուսիքը), Նախիջևանը, Ջավախքը, Բասենը (Կարսը) և որոշ ենթամարզեր: Զկան նաև Արևելյան Հայաստանի համապատասխան պատմազդգրական մարզերը, որոնք ներկայացնելու հնարավորություն ստեղծվեց փոքրինչ ուշ, պատմական Հայաստանի պատմազդգրական մարզերի բնութագրմանը նվիրված զեկուցմամբ, 1964-ին Մոսկվայում կայացած Մարդաբանական և ազգագրական գիտությունների 7-րդ միջազգային գիտաժողովում³⁶, նաև անդրադարձներ սույն խնդրին համամիութենական ազդադրական գիտաժողովներում³⁷:

Արդ, դառնանք խնդրո առարկային առնչվող որոշ սկզբունքային հարցերի քննարկմանը՝ նկատի ունենալով, որ առհասարակ չկան անխառն և միատարր էթնիկական և ազգագրական մարզեր ու մշակույթներ, որն առավել ևս ճշմարիտ է հայոց վերաբերյալ: Այդուհանդերձ, որոշակի բնատարածքում պատմականորեն կազմավորվում է այս կամ այն էթնիկ հանրույթն իր ազգագրական մարզերով ու ենթամարզերով, ժամանակի հոլովույթում ենթարկվելով վերափոխությունների, բայց պահպանելով ինքնության բնորոշ դժերը (որոնք կորցնելու դեպքում դադարում է դրա գոյությունը և փոխարենն առաջանում է մի այլ էթնիկ կազմավորում՝ իր մշակույթով):

³⁵ Տե՛ս Հարության Կավկազ, տ. 2, ս. 434-662 (Հայկական ԽՍՀ ազգագրական շրջանների քարտեզը՝ 441 էջում):

³⁶ Տե՛ս Դ. Ս. Վարդյան. Խարakteristika основных этнографических районов Армении в XIX в. М., 1964; D. S. V ar d y a n . Characteristic Features of Major Ethnographic Areas in Armenia in the XIX Century.— Труды VII Международного конгресса антропологических и этнографических наук, т. 10, 1970.

³⁷ Դ. Ս. Վարդյան. К характеристике хозяйствственно-культурных типов Кавказа. — «Всесоюзная сессия, посвященная итогам полевых этнографических и антропологических исследований, 1976-1977 гг.» — Тезисы докладов, Ереван, 1978. Դ. Վ ա ր դ յ ա ն ։ Հայաստանի պատմազդգրական մարզերի մնութաղլրման հարցի շուրջը. — Ազանդույթն ու նորույթը Հայոց կենսապահովման մշակույթում, 5 (գեղարվումների հիմնադրույթներ). Երևան, 1998, ն ու յ ն ի Հայաստանի Հիմնական ազգագրական շրջանների բնութագիրը ԺԹ գարում. — «Բազմավեպ», Վենետիկի և Արդար 2002:

Այդ ամենն ամբողջությամբ վերաբերում է նաև Հայաստանին ու հայ էթնոսին՝ իր հանուր մշակույթով հանդերձ: Զընկղմվելով պատմության հեռավոր ծալքերը, հարկ է նշել, որ պատմականորեն կայացած Արևելյան Հայաստանի ազգագրական մարդերը, որոնք մինչև վերջերս խճանկարային ձեռվ ներկայացնում էին համայն պատմական Հայաստանը, 1980-ականների վերջերին-1990-ականների սկզբներին Աղբբեջանի ազերի թուրքերի վայրագությունների, ինչպես նաև Հայաստանում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժի հետևանքով, զգալապես խաթարվեցին: Աղբբեջանի կաղմում եղածները հայաթափվեցին (բացառությամբ Արցախի, որն ազատագրվեց և կայացավ որպես Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն), բնակիչների հոծ զանգվածներ բոնագաղթեցին Հայաստան՝ ավելի խայտարդետ դարձնելով դրա ազգագրական մարդերի մասնանկարայնությունը (որը կարծես շատ թե քիչ կայունացել էր Մեծ Եղեռնից մազապուրծների ու Հայրենադարձության հոսքերից հետո): Հայոց առավել հոծ զանգվածներ թե՛ բուն ՀՀ-ից արտագաղթեցին մերձավոր և հեռավոր արտերկրներ՝ ստվարացնելով Սիյուռքի հայ էթնիկ խմբերի միծ ու փոքր զանգվածները:

Արևելյան Հայաստանի պատմագրակրական մարդերը հիմնականում կազմավորվել են Հայաստանի այդ հատվածը XIX դ. սկզբներին Ռուսաստանին միացվելուց հետո, ընդ որում, դրանցում առանձնանում է երկու հիմնական մարզախումբ՝ բուն արևելահայոց (որի մեջ նկատելիորեն սահմանադատվում են պարսկահայերը) և բուն արևմտահայոց՝ յուրաքանչյուրն իր տնտեսամշակութային կենտրոնով, որոնք միաժամանակ դարձել են նաև վարչատարածքային կենտրոններ: Առաջիններից են Արարատը (ներառում է Արարատի և Արմավիրի վարչատարածքային մարզերը, կենարոնը՝ Արտաշատ քաղաքը), բացառյալ այն գավառները, որոնք ժամանակին ընդգրկվել են Այրարատի նահանգի կազմում և որի բնակչությունը բնավագիները փոքր կղզյակների ձևով առկա են միայն Վաղարշապատում (Էջմիածին) և հարակից որոշ բնակավայրերում: Հաջորդը Վայոց ձորն է (կենտրոնը՝ Եղեգնաձոր քաղաքը), որ միջնադարում եղել է Սյունիքի մարզի մեջ, սակայն հայաթափվելուց հետո, անցյալ դարի երկորդ տասնամյակի վերջին բնակեցվել է նույն պարսկահայերով («նոր հայեր») և ուր բնիկներ («Հին հայեր») են ապրում վեց գյուղում: Մյուսները բուն արևելահայ բնակչությամբ են՝ Լոռին (կենտրոնը՝ Վանաձոր քաղաքը), Տավուշը (կենտրոնը՝ Իջևան քաղաքը), Սյունիքը (կենտրոնը՝ Գորիս քաղաքը), Արցախը (կենտրոնը՝ Ատեմիանակերտ քաղաքը): Իսկ Ռուտիքը և Նախիջևանը լիովին հայաթափվել են: Արանցից կենցաղամշակութային առումով տակավին դգալապես տարբերվում է արևմտահայոց մարզախումբը, որի մեջ են Շիրակը (կենտրոնը՝ Կումայրի քաղաքը), Ջավախիքը (կենտրոնը՝ Ախալքալաք քաղաքը), որոնք թե՛ սահմանամերձ են միմյանց և թե՛ համանման՝ մարդկանց ապրելակերպով,

քանի որ նրանք հիմնականում Բարձր Հայքից, Բասենից և Տուրուբերանից ներգաղթած հայերի հետնորդներն են:

Այսուհետև հաջորդում են Գեղարքունիքը (Կենտրոնը՝ Գավառ քաղաքը), Կոտայքը (Կենտրոնը՝ Հրազդան քաղաքը) ու Արագածոտնը (Կենտրոնը՝ Աշտարակ քաղաքը), որոնց հայ բնակչությունը մեծ մասամբ կազմված է Տուրուբերան-Վասպուրականից ներգաղթածների հետնորդներից. ընդ որում, Արագածոտնում կենցաղամշակութային ուրույն շերտ են կաղմում Մեծ եղեռնից մազապուրծ սասունցիները և բնիկ աշտարակցիները, օշականցիներն ու փարպեցիները:

Մշակութակենցաղային խառնարան է մայրաքաղաք Երևանը, ուր տակավին նկատելի է բնակչության երեք հիմնական շերտի առկայությունը՝ հին (բնիկ) երևանցիներ, Հայաստանի Հանրապետության ու Արևմտյան Հայաստանի մարզերից վերաբնակվածներ, Հայրենադարձներ (արտերկրիդ): Այս ամենով էլ երևանը կարելի է բնութագրել որպես հանուր հայ էթնոսը մանրանկարորեն ներկայացնող ուրույն պատմագագրական մարդ:

Այս ամենով, անշուշտ, չի սպառվում հայոց ազգագրական բնութագրումը, մանավանդ, որ չխոսվեց արտաշխարհում գրեթե ամենուր սփռված անցյալում ու նոր կազմավորված կամ հներին հավելված ազգագրական մեծ ու փոքր խմբերի մասին: Հայաստանի (թե՛ պատմական, թե՛ արդի) պատմագրագրական բնութագիրը թերի կլիներ, եթե այն չգիտարկվեր առավել հանգամանալից հետադարձ քննարկմամբ, ինչպես նաև, եթե չներկայացվեին Հայաստանի ազգային փոքրամասնությունների տեղաբաշխվածությունը և դրանց էթնոմշակութային փոխառնչակցությունը հայերի ու միմյանց նկատմամբ: Հույժ կարևոր է նաև պատմագրագրական մարզերին զուգընթաց, ավելի ճիշտ՝ դրանց համաձույլ ներկայացնել նաև Հայաստանի տնտեսամշակութային տիպերը՝ ըստ բնակլիմայական գոտիների ու էթնիկական հանրությների, որը նույնպես հետադային է մնում: Արանք կարեոր, բայց լրացըցիչ քննարկման առարկա են³⁸:

Ամփոփելով վերոշարադրյալը, կարելի է ասել, որ ներկայումս առկա է ՀՀ-ի սլատմագրագրական (կամ սլատմամշակութային) մարզերի ու Սփյուռքի վերասերման բուռն գործընթաց, որի կայունացումը սլայմանապորված է հայրենի երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավմամբ ու կայունացմամբ:

³⁸ Ստ. Լիսիցյանը ժամանակին մի գեկուցմամբ փորձ է արել ուրվագծելու Հայաստանի ազգագրական բաժանման սահմանները (տե՛ս Ս. Լ. ի ս ի ց յ ա ն. Հայաստանի ազգագրական շրջանայցումը. — XXV. Վ. Մ. Մոլոտովի անվ. երևանի սետ. համալսարանի հոբելյանական գիտական սեսիա, 1946 թ. ապրիլի 22–26-ը, հայ. էջ 12, ուսւ, էջ 26):

Զեկուցման դժվարընթեռների բնագիրը (Յ ձեռագիր էջ) պահպում է Հայաստանի ազգային արխիվում, ֆ. 428 (Լիսիցյանների փոնդ), ցուց. 4, գործ 76:



ОБЩАЯ ХАРАКТЕРИСТИКА ОСНОВНЫХ ИСТОРИКО-ЭТНОГРАФИЧЕСКИХ ОБЛАСТЕЙ АРМЕНИИ (XIX – XXв.)

ДЕРЕН ВАРДУМЯН

Р е з ю м е

Уже в первой половине 1 тыс. до н.э., в процессе формирования армянского народа, на Армянском нагорье образовался целый ряд историко-этнографических областей (ИЭО) со своими хозяйствственно-культурными особенностями, которые, несмотря на периодическую историко-политическую нестабильность в регионе, в основных очертаниях сохранились до начала XX в. Это области Покр Айк (Малая Армения) (1), Цопк-Ахдзник (2), Барцр Айк (Высокая Армения) (3), Туруберан (4), Васпуракан (вместе с Корчайк-Моксом) (5), Гугарк-Тайк (6), Айрапат (7), Парскаайк (Персидская Армения) (8), Арцах-Утик (9), Сюник (10), каждая со своими подобластями. В результате массовой иммиграции, последовавшей после присоединения Армении к России (начало XIX в.), этнокультурный состав Восточной Армении стал мозаичным: здесь образовались этнографические области и группы западных и персидских армян. В Западной Армении и Иране, несмотря на это, продолжали сохраняться свои историко-этнографические области. В результате геноцида, осуществленного Турцией (1915-1923 гг.), большая часть исторической Армении лишилась армянского населения. Подвергшиеся депортации армяне рассеялись по всему миру, найдя приют также в Восточной Армении, вследствие чего ее этнографический состав ощутимо изменился. В начале 1990-х гг. он стал еще более пестрым из-за новой волны армян, депортированных из Азербайджана. Таким образом, в Восточной Армении сформировались следующие ИЭО: Лори (3), Тавуш (4), Сюник (10), Арцах (5), Арагацотн (6), Гегаркуник (7), Джавахк (1) (с абсолютным преобладанием потомков западных армян).